ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՊՀ հիմնադրամ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ Հեքիաթի ուսուցման դերը և արդյունավետությունը տարրական դասարաններում**

**Կատարող՝**..... Մարտիրոսյան Սոնյա Համբարձումի

**Ղեկավար՝**..... Շողիկ Սարգսյան մ.գ.թ., դոցենտ

**Գյումրի 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1.

1.1. Հեքիաթի ստեղծման պատմությունը.....4

1.2. Հեքիաթի կառուցվածքը, տեսակները.....6

Գլուխ 2.

2.1. Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության, երևակայության զարգացման գործում…….....……8

Եզրակացություն .....26

Գրականություն.....27

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հեքիաթ**, բանահյուսական ժանր, գերազանցապես արձակ, բանավոր պատմվածք՝ կախարդական, արկածային, կենցաղային բովանդակությամբ, հյուսված գեղարվեստական հնարանքի յուրատեսակ միջոցներով: Հեքիաթը բանահյուսության ժանրերից է, որտեղ հերոսները և դեպքերը պատկերված են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ՝ հրաշապատում ձևերով: Համաշխարհային բանագիտության մեջ տարբեր տեսություններ ու կարծիքներ կան հեքիաթի ծագման ու ձևավորման վերաբերյալ: Հեքիաթը կարճ պատմություն է՝ ավելի հաճախ բանհյուսական կերպարներով, ինչպիսիք են թզուկները, էլֆերը, փերիները, հսկաները, գնոմները, ջրահարսերը, միաեղջյուրները կամ վհուկները, հեքիաթներում հաճախ հանդիպում է կախարդանք կամ մոգություն: Հեքիաթների մեջ ժողովուրդն արտահայտում է իր նվիրական երազանքներն ու ձգտումները: Այն ինչ կյանքում անհնար է եղել իրականացնել, մարդիկ ցանկացել են իրականացած տեսնել հեքիաթներում:

Մանկական գրականությունը (հատկապես հեքիաթը) մանկավարժի դաշնակիցն է, փոքրիկի դաստիարակն ու խորհրդատուն: Այն նպաստում է երեխայի աշխարհայացքի հիմքերի ձևավորմանը, բնավորության կազմավորմանը, հարստացնում նրա նախնական գիտելիքները, բառապաշարը, կենսափորձը, հղկում գեղագիտական ճաշակն ու կոփում կամքը: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են: Դրանք ծագել են մարդկության վաղնջական շրջանում: Սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և իրենց անմիջականությամբ, պարզությամբ, լավատեսությամբ ու գրավչությամբ հուզել ընթերցողներին: Տարրական դասարանների «Մայրենի»-ի դասագրքերում տեղ գտած հեքիաթների հիմքը նույնպես մարդկային կյանքն է՝ իր բարդ ու բազմապիսի փոխհարաբերություններով:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել հեքիաթի ուսուցման գործընթացում սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:

Մեր խնդիրը ուսումնական գործընթացում հեքաթի ուսուցման պրակտիկ նշանակության ու դերի ուսումնասիրումն ու արժևորումն է: Հեքիաթը նոր բանահյուսության մի նմուշ է, որի ուսուցման շնորհիվ զարգանում է երեխաների երևայական միտքը, ակտիվ բառապաշարը և լեզվամտածողությունը:

Ստորև բերված հետազոտությունը նպատակաուղվված է այս թեմային:

# Գլուխ 1

## 1.1.Հեքիաթի ստեղծման պատմությունը

Հեքիաթը բանահյուսության ժանրերից է, որտեղ հերոսները և դեպքերը պատկերված են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ՝ հրաշապատում ձևերով: Համաշխարհային բանագիտության մեջ տարբեր տեսություններ ու կարծիքներ կան հեքիաթի ծագման ու ձևավորման վերաբերյալ: Հեքիաթը կարճ պատմություն է՝ ավելի հաճախ բանահյուսական կերպարներով, ինչպիսիք են թզուկները, էլֆերը, փերիները, հսկաները, գնոմները, գոբլինները, ջրահարսերը, տրոլները, միաեղջյուրները կամ վհուկները, հեքիաթներում հաճախ հանդիպում է կախարդանք կամ մոգություն: Հեքիաթները հաճախ շփոթվում են այլ բանահյուսական նմանատիպ ժանրերի հետ, օրինակ՝ լեգենդները, առասպելները (վերջիններիս ներառած պատմություններում սովորաբար առկա է ճշմարտության նշույլ): Հեքիաթների մեջ ժողովուրդն արտահայտում է իր նվիրական երազանքներն ու ձգտումները: Այն ինչ կյանքում անհնար է եղել իրականացնել, մարդիկ ցանկացել են իրականացած տեսնել հեքիաթներում: Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հաճախ էլ իրար են խառնված իրականն ու երեվակայականն:

Իսկ ո՞վ կարող է ասել, թե ե՞րբ է ծագել հեքիաթը. երևի մարդ արարածի բառ ու բանի, նրա աշխարհայեցողության, մտքի ու երևակայության, ձգտումների ու երազանքների ձևավորման պահից: Ժողովրդի սիրտը, միտքը, փիլիսոփայությունը, հանճարը արտացոլվում են նրա ստեղծած հեքիաթների մեջ: Հեքիաթ ստեղծող ժողովուրդն անմահ է: Հետևաբար՝ հեքիաթն էլ նրա հետ միասին մնում է հավերժ: Հեքիաթն էլ ունի իր «կյանքի պատմությունը», ի՞նչ պայմաններում է ծնվել, ի՞նչ առիթով է կրկնվել, որո՞նք են նրա կենսական, այժմեական նշանակությունն ու ազդեցությունը: Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին

աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր… հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:

Հեքիաթները հիմնականում արձակ են ստեղծվել: Պատահում են նաև չափածո հեքիաթներ: Հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը, ինչպես՝ <<Լինում է, չի լինում>>, <<Կար չկար>>, <<Ժուկով ժամանակով>>, <<Չգիտեմ ո՛ր երկրում, ո՛ր թագավորության մեջ>>: Վերջաբանի համար էլ հատուկ արտահայտություններ կան, ինչպես՝ <<Երկնքից երեք խնձոր ընկավ>> ,<<Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին>>:

## 1.2.Հեքիաթի կառուցվածքը, տեսակները

Հեքիաթների հեղինակը ժողովուրդն է, նա է ստեղծել դրանք, ինչպես առասպելները, էպոսը, առածները: Դա եղել է շատ հին ժամանակներում: Ավելի ուշ առանձին հեղինակներ մշակում են ժողովրդական հեքիաթները: Նրանք նաև ինքնուրույն հեքիաթներ են գրում: Այդ տեսակի հեքիաթները կոչվում են հեղինակային: Հեքիաթները բաժանվում են երեք մեծ խմբի՝ հրաշապատում կամ կախարդական, կենդանական և իրապատում:

Հրաշապատում հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի դեմ: Չար ուժեր են դևերը, կախարդները, վհուկները, վիշապները և այլն: Դեպքերը սովորաբար տեղի են ունենում ստորգետնյա թագավորությունում, այլ աշխարհներում, անհավատալին իրական է դառնում: հեքիաթի հերոսին օգնում են ձին, թռչունը, բարի պառավը, իմաստուն ծերունին: Բոլոր հեքիաթների մեջ չարի և բարու պայքար կա, և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով:

Կենդանական հեքիաթներում անձնավորում են տարբեր կենդանիներ, պատկերվում են նրանց այլևայլ հատկությունները, վարքը: Նրանցմիջոցով այլաբանորեն ներկայացվում են մարդկային որոշակի հատկանիշներ: Մի կողմից՝ չարություն, նախանձ, ագահություն, ժլատություն, մեծամտություն, մյուս կողմից՝ բարություն, անձնազոհություն, վեհանձնություն, ազնվություն, արդարամտություն, հավատարմություն, իմաստություն:

Իրապատում հեքիաթներում նկարագրվում է ժողովրդի կյանքը, մարդկային վսեմ ձգտումները: Մարդկանց մշտապես հուզել է հատկապես հալածվածների և ճնշվածների ճակատագիրը: Շատ հեքիաթներում էլ ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկային զանազան արարատները:

Այսպիսով, հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի

էմոցիոնալ և պատկերավոր: Ուստի անհրաժեշտ է հեքիաթների տարբեր տեսակների առկայությունից ընտրելով համապատասխանը՝ նպաստել երեխայի աշխարհաճանաչողական, երևակայական, ստեղծագործական և խոսակցական մակարդակների իրացմանը համապատասխան մեթոդների կիրառմամբ:

Հայ ժողորդական հեքիաթների մի զգալի մասը հյուսվել է ազգային ստեղծագործական հիմքով և տարբերվում է ուրիշ ժողովուրդների հեքիաթներից՝ լեզվով, կյանքի, կենցաղի, բնության նկարագրով ու հերոսների հոգեկան կերտվածքով: Տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում զետեղված են ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև դրանց գրական մշակումներ՝ ընկերասիրության ու հավատարմության, աշխատանքի ու աշխատասիրության, ագահության, խորամանկության վերաբերյալ: Ժողովրդական հեքիաթները, առակներն ու լեգենդները մարդկային էության շատ ավելի խորը իմացություն և հավերժական իմաստություն են կրում իրենց մեջ:

Կրտսեր դպրոցականներին պետք է տեղեկացնել, որ ժողովրդական հեքիաթների լավագույն մշակումներ են կատարել Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ստ. Լիսիցյանը, Ստ. Զորյանը, Մ. Կորյունը և ուրիշներ:

# Գլուխ 2.

## 2.1.Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության, երևակայության զարգացման գործում

Դարեր շարունակ մայրիկներն ու տատիկները հեքիաթների միջոցով փոքրիկներին ներարկել են սեր՝ բնության, մարդու, հայրենիքի, կենդանիների ու թռչունների նկատմամբ: Դրանցում արտացոլվել են մարդկանց առօրյան, կենցաղն ու աշխատանքը: Որքա՜ն հրաշալի հեքիաթներ են հյուսվել կենդանիների, թռչունների և բնության մասին:

Հեքիաթն ուսուցման արդյունավետության ապահովման տեսակետից ծանրակշիռ տեղ ունի: Այն նպաստում է մանկան երևակայության խթանմանը, հետաքրքրասիրության զարգացմանը և ընթերցասիրության մշակմանը: Հեքիաթի ընթերցանությունն առնչվում է նաև մանկան աշխարհայացքի ձևավորման սաղմերին:

Դեռևս փոքր հասակից երեխան ծանոթանում և սիրում է ժողովրդական հեքիաթները, առակները, շուտասելուկները, սուտասելուկները, սուրասելուկները և հանելուկները: Ընդհանրապես հեքիաթների ընդերքը հարուստ է ժողովրդական հանճարի լուսավոր փայլատակումներով, որոնք արտահայտվում են թևավոր խոսքերով, աֆորիզմներով, խրատներով, ասացվածքներով:

Այսպես, «Պարծենկոտի մեջը փուտ է, ինչ որ ասի՝ կեսը սուտ է», «Ստի ոտքը կարճ է լինում, «Սուտասանի տունը հրդեհ ընկավ, ոչ ոք չհավատաց», «Քամու բերածը քամին է տանում», «Աշխատող խոփը չի ժանգոտվի», «Խելքը լավ է, քան հարստությունը», «Աշխատանքը զարդարում է մարդուն»:

Գարդները «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում» գրքում նշում է, որ մարդիկ ի ծնե օժտված են: Նրանց հատուկ են ընկալման և մտածողության բոլոր ձևերը: Սակայն տարբեր մարդկանց մեջ դրանցից մեկը կամ մի քանիսը դրսևորվում են առավել ընդգծված: Մտածողության այս տեսակների վրա հենվելն ուսուցումը դարձնում է առավել արդյունավետ: Բանն այն է,

որ ոչ թե աշակերտն է հարմարվում ուսուցման այս կամ այն ձևին, այլ ուսուցման ձևն է հարմարեցվում աշակերտի ընկալմանը:

Հեքիաթները և ժողովրդական իմաստուն ասացվածքները նպաստում են տարբերակելու աշխատասիրությունը՝ ձրիակերությունից, ակտիվ աշխատանքային գործունեությունը անգործությունից, կախվածությունը թուլամորթությունից: Հեքիաթը միաժամանակ օժանդակում է երեխաների մտավոր զարգացմանը և նրանց դաստիարակում թերությունների նկատմամբ անհաշտության ոգով: Այն օգնում է բացահայտելու ոչ միայն շրջապատի ու ընկերների անկատարությունները, այլև տեսնելու դրանց ծագման պատճառները: Կարևոր է, թե արդյո՞ք կարողանում ենք սովորեցնել պատմել ու վերարտադրել այն, ինչ նրանց կարդացել ենք, կամ իրենք են կարդացել: Բանն այն է, որ մեծերի պատմած հեքիաթը երեխաների զգաց մունքների ու երևակայության վրա նույնքան ուժեղ է ազդում, որքան բնագիրը:

Դարեր շարունակ գոյատևել է երեխաներին ավանդույթներ, ասքեր, հեքիաթներ, պատմություններ ու ծիծաղաշարժ դեպքեր պատմելու սովորությունը: Չէ՞ որ հեքիաթը նախկինում հենց միայն այդպես, բանավոր կերպով է գոյություն ունեցել և միայն հետագայում է բանահավաքների ու գրողների կողմից գրառվել, մշակվել ու գրական, գրքային ձև ստացել: Հեքիաթների ու փոքրիկ պատմությունների ունկնդրումը երեխաների համար հաճելի զբաղմունք է: Դա ուսուցողական արժեք ունի ոչ միայն խոսքի զարգացման, այլև աշխարհաճանաչողական տարաբնույթ գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման առումով: Այսպես, տարրական դասարան ների մայրենի լեզվի դասագրքերում տեղ գտած հեքիաթները (իհարկե, ոչ բոլորը) կարելի է ներկայացնել տիկնիկային թատրոնի բեմադրությունների ձևով: Հեքիաթները հետաքրքիր պատկերների ու երևույթների միջոցով երեխաներին տանում են դեպ անսովոր աշխարհ: Դրանցով ընդարձակվում են նրանց մտահորիզոնը ու երևակայությունը:

***Երաշխավորվում է առաջադրել.***

1.Նշե՛ք կարդացած հերիաթներից այն մեկը, որի բովանդակությունը ձեզ ամենից շատ է դուր եկել:

2. Այդ հքիաթի ո՞ր հերոսին ես ուզում նմանվել և ինչու՞,

3. Գրառե՛ք՝ հեքիաթի գաղափարն արտահայտող ժողովրդական առածներն ու ասացվածքները:

4. Մի հեքիաթ էլ դուք ստեղծեք:

5. Շարունակեք հեքիաթի բովանդակությունը:

6.Ո՞վ է հաղթում այս հեքիաթում:

7. Պատմե՛ք և գտե՛ք հեքիաթի մտադրույթն արտահայտող մի քանի ժողովրդական առածներ ու ասացվածքներ:

8. Ո՞ր հեքիաթից է վերցված այս հատվածը:

9.Յուրաքանչյուր հեքիաթից առանձնացրեք՝

ա) չարն ու բարի ,

բ) արդարն ու անարդարը..

10. Ցուցադրե՛ք տարբեր հեքիաթներից հատվածներ (նախապես տարբերակել):

Հեքիաթները դրվատում են բարին ու խարազանում չարը: Դրանք ընդգծում են լույսի ու գիտության կարևորությունը, որևէ արհեստի տիրապետելու անհրաժեշտությունը, փառաբանում են խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, գովաբանում մարդկային նկարագրի լավագույն ու ընդօրինակելի գծերը: Հեքիաթի միջոցով ընդգծվում է մարդկանց՝ մոլորություններից հեռու պահելու կենսականորեն կարևոր միտումը:

Ամենակարևորն այն է, որ հեքիաթը ժանրային առանձնահատկությունների շնորհիվ լայն հնարավորություններ է ընձեռում սովորողների ակտիվության և ինք նուրույնության զարգացման առումով: Պետք է ձգտել, որ ժողովական իմաստության հիանալի նմուշների բառարանը դառնա սովորողների ակտիվ բառապաշարի անքակտելի մասը: Հանձնարարելի է, որ հատկապես այդ նպատակով աշակերտները պահեն տետրեր: Տանը մայրենիի դասին նախապատրաստվելիս նրանք համապատասխան հեքիաթից պետք է դուրս գրեն թևավոր խոսքեր, իսկ դպրոցում և առօրյայում դրանք օգտագործեն իրենց բանավոր և գրավոր խոսքում: Տեքստի վրա աշակերտների ինքնուրույն և ակտիվ աշխատանքը՝ կազմակերպելու տեսակետից չափազանց արդյունավետ է հեքիաթի որևէ պահի վերարտադրումը նկարի միջոցով: Հատկապես այս հանձնարարության նկատմամբ աշակերտները մեծ պատրաստակամություն են ցաբերում և սիրով ձեռնամուխ լինում դրա կատարմանը:

Այսպես.

«Հեքիաթից ընտրեք և նկարեք այն պահը, որը ձեզ դուր է գալիս»: Ուսուցիչը կարող է առավել հաջողված ու հետաքրքրական աշխատանքները ցուցադրել դասարանում խրախուսելով հեղինակներին:

Հեքիաթի որևէ ուշագրավ պահի նկարագրումը կամ հերոսներից մեկի բնութագրումը նշանակում է երևակայությամբ վերապրել հեքիաթի բովանդակությունը: Այստեղ պարզ է, որ խոսքի ու գույների արվեստի միաձուլում է տեղի ունենում: Սա էլ ուսուցման արդյունավետությունը բարձրացնող կարևոր հանգամանքներից է:

Ուսուցիչը խոսում է հեքիաթի մասին, այնուհետև աշակերտներին հայտնի հեքիաթներից ներկայացնում են մի քանի երկխոսություններ: Երեխաները փորձում են ըստ երկխոսությունների կազմել հաղորդակցությունների սխեմաներ ու քարտեզներ:




Երեխաներին տրվում են հեքիաթի յուրաքանչյուր դրվագի համապատասխանող առանձին նախադասություններ, որոնք պետք է դասավորել ճիշտ և տրամաբանված հերթականությամբ: Առաջարկվում է կազմել հեքիաթի կառուցվածքի բուրգ՝ հետևյալ ձևով.

1. հեքիաթի հեղինակը

2 գործող անձի անունը

3. որտեղ է նա գտնվում

4. առաջին դրվագը

5. երկրորդ դրվագը

6. երրորդ դրվագը

7. հանգույցի լուծումը




Ուսուցիչը պետք է օգնի երեխային, որպեսզի նրա համար տեսանելի դարձ նի հեքիաթի կառուցվածքը և իրադարձությունների հաջորդական ընթացքը:

Այսպես.

***Հեքիաթի կմախքը***

Հեքիաթի վերնագիր_____

Հեքիաթն սկսվում է_____

Դրանից հետո_____

Հաջորդը _____

Իսկ հետո_____

Հեքիաթն ավարտվում է_____

Հանգույցի լուծումը_____

Մի երկու դեպք էլ դու ավելացրու _____

Այնուհետև աշակերտները գրում են հեքիաթի վերնագիրը, նշում գլխավոր և երկրոր դական հերոսներին, գործողության վայրը: Լրացնում են հեքիաթի քարտեզը՝ պահպանելով տրամաբանական կապը:

***Հեքիաթի քարտեզ.***




***Որտե՞ղ, ե՞րբ***

Հանգույցը

Լուծումը

*Հեքիաթի պլան*

1.Ովքե՞ր են հեքիաթի գործող հերոսները

Հարկավոր է ստեղծել սեփական հեքիաթը և թողնել, որ աշակերտները կազմեն իրենց քարտեզները և գծագրերը: Նման պարագայում նրանք կունենան ընտրության ազատություն: Դա էլ նպաստում է նրանց ինքնագիտակցության բարձրացմանը և զարգացնում երևակայությունը: Սա արդեն տանում է դեպի շրջապատող աշխարհի ավելի խորքային ընկալում:

Յուրաքանչյուր երեխա անհատակություն է: ՈՒստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի ու հմտությունների զարգացման համար:

Երբ երեխան իր մտքերն ազատ արտահայտելու հնարավորություն է ստանում, դա ոչ միայն օգնում է ուսուցչին, ավելի լավ ճանաչել նրան, այլև նպաստում է երեխայի ինքնաճանաչողությանն ու ինքնահաստատմանը: Ուսուցիչը պետք է կարողանա իր աշակերտներին ակտիվացնել, հորդորել՝ ստանձնելու ուսումնառության պատասխանատվությունը: Պարզ է, որ նման մոատեցման դեպքում աշակերտները ձգտում են օգնել միմյանց, փորձ են ձեռք բերում: Հաղորդված տեղեկատվության ճշմարտացիությունը վիճարկելու եղանակով նրանք մարզում են իրենց միտքը:

Անհրաժեշտ է հեքիաթի ուսուցման սովորական դասերն անմիջապես շաղկապել արտադասարանային ընթերցանությանը: Այս նպատակով կարելի է ձևավորել վահանակ, լույս ընծայել պատի թերթ՝ «Հեքիարների աշխարհում», «Հայկական

ժողովրդական հեքիաթներ», «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ», «Մեզ հյուր է հեքիաթ-մոլորակը», «Մեր սեփական հեքիաթները» և այլն: Արդյունավետ է ցերեկույթների անցկացումը:

Ուշագրավ է նաև կենդանի ու շարժական վիկտորինայի օգտագործումը:

Այսպես.

*1.Աշակերտներից մեկը համապատասխան զգեստով դուրս է գալիս բեմահարթակ՝«Ձեզ ծանոթ ո՞ր հեքիաթի, ո՞ր հերոսն եմ ես» հարց-առաջադրանքով:*

*2.Նախատեսված հեքիաթներից որևէ պարբերություն է ասմունքվում առանց հեղինակի անունն ու հեքիաթի վերնագիրը հիշատակելու (ունկնդիրները պետք է կռահեն չասվածը):*

*3.«Ո՞ր հեքիաթից է վերցված հետևյալ իմաստությունը»…*

*4.Թանգիֆի (մառլյայի) վրա սոսնձել մի շարք հեքիաթների դրվագներ և առաջադրել գտնել՝ ո՞ր հեքիաթից է, և ո՞վ է հեղինակը:*

Հեքիաթի ուսուցման դասերին կարելի է կիրառել խնդրահարույց նմանատիպ եղանակներ, քարտեր և այլն:

Երբ երեխաները սովորած հեքիաթի օրինակով աշխատասեր, անբան ու ծույլ ընկերոջ մասին պատմվածք են հորինում, ապա դա նշանակում է, որ նրանք հոգով պայքարի մեջ են մտնում վատի դեմ՝ հանուն լավի, տգեղի դեմ՝ հանուն գեղեցիկի:

Հեքիաթների ուսուցումը կարելի է կազմակերպել նաև խաղի միջոցով.

1.Առաջարկում ենք պատրաստել քարտերի տրցակ, դրանց վրա նշել դերերը կամ հեքիաթի թեման (կարելի է առանց նկարազարդումների):

2.Կարելի է հորինել հեքիաթ՝ պատահաբար դուրս բերված երեք քարտերի հիման վրա. սկսել վերջից, կամ՝ քարտերի տրցակը երկու մասի բաժանել և երկու խմբով աշխատել՝ մրցելով, թե ում հեքիաթն ավելի հետաքրքիր կլինի: Պատահում է, որ հեքիաթի գաղափարը երեխաները հղանում են միայն մի քարտի հիման վրա:

3.«Քարտերը փռել սեղանին» խաղի էությունը խմբով պատմվածքի հորինումն ու դրա նկարագարդումն է: Աշխատանքը կարող է խթանել քարտերի մի հատուկ կապուկ, որը պատրաստել են խաղը կազմակերպողները՝ լրագրերից ու ամսագրերից կտրած տարբեր նկարներ ստվարաթղթի տասը քարտի վրա փակցնելով: Այդ քարտերն ամեն անգամ տարբեր ձևով են կարդացվում, քանի որ յուրաքանչյուր քարտ կարող է կապված լինել իր նախորդի հետ: Ուսուցիչն առաջարկում է՝ իր կապուկից առանց նայելու դուրս քաշել մի քարտ: Այդ գործողությունը կատարող աշակերտն սկսում է մեկնաբանել, թե իր կարծիքով ինչ է պատկերում նկարը: Մյուսներն ուշադիր լսում են պատրաստ շարունակելու այդ պատմությունը: Ստացվում է համագործակցային ստեղծագործություն, և ձևավորվում է մի երկար շարժանկար: Խաղի մեջ կարելի է բազմազանություն մտցնել՝ օգտագործելով ոչ միայն քարտեր, այլև կոնկրետ առարկաներ: Չէ՞ որ իրերն ավելի ամուր նեցուկ են երևակայության համար, քան բառերը:

Հեքիաթի հիմնական գաղափարներն ավելի խորությամբ ընկալելու համար հնարավոր է վերլուծել ասացվածքը և պարզել, թե ով ինչպես է հասկանում այն, ինչ բարոյական գաղափար է ամփոփված այնտեղ, և նոր միայն ընթերցել հեքիաթը:Նման դեպքում երեխաներն անմիջապես կռահում են բարոյական այն շեշտադրումը, որն ընկած է հեքիաթի հիմքում:

Այսպիսով, հեքիաթների ուսումնասիրությունը ճշտում, կոնկրետացնում է երեխաների պատկերացումները մարդկային բարոյական հատկանիշների վերաբերյալ և մեծապես նպաստում նրանց մեջ այդ հատկանիշների արմատավորմանը:

*Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է, ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը:*

***Հովհաննես Թումանյան***

Մանկությունը մարդկային կյանքի արշալույսն է միշտ գեղեցիկ, անբիծ, հաշտ ու խաղաղ: Եվ ամբողջ կյանքում մանկության հուշերը մեր ականջին շշնջալուեն անմոռանալի օրերի լուսե հեքիաթը..

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության հնագույն ժանրերից է և գալիս է դարերի խորքից: Այն, ինչպես և բանահյուսության այլ ստեղծագործություններ, սկզբնավորվել է ժողովրդական զանգվածների մեջ, մշակվել, լրացվել, փոփոխվել, փոխանցվել սերնդից սերունդ և պահպանել պատմական տարբեր ժամանակահատվածների աշխարհըմբռնման ու կենսահայեցողության հետքերը: Հեքիաթներում ժողովուրդն ամփոփել է իր երազանքները, ձգտումները և իմաստնությունը:

Անսահման տպավորիչ է շվեդացի հայտնի գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Սելմա Լագերլյոֆի կյանքը (1858-1940): Ս. Լագերլյոֆը ծնվել է Շվեդիայում Մոլբակի կալվածատիրական դաստակերտում, 3-ամյա աղջնակը կաթվածահար է լինում և տասնհինգ տարի շարունակ գամված մնում անկողնուն: Հետագայում Սելման գրում է, որ ինքը կարողացել է ապրել տատիկի՝ իր կյանքի համար պայքարի ու տառապանքների շնորհիվ: Նա չէր հեռանում թոռնիկի անկողնուց և սփոփում էր իր հրաշալի հեքիաթներով: Հենց այդ կախարդական աշխարհն էլ ուժ ու կորով է տալիս նրան, զսպում, որ չարտասվի, չկոտրի խաղալիքները և չտառապի հուսահատությունից՝ տեսնելով, թե ինչպես են վազվզում, խաղում իր եղբայրներն ու քույրերը: Տատիկի մահից հետո Սելման լսում էր իր բարի դայակ Նանայի հեքիաթները արքայազների, արքայադուստրերի, ջրահարսերի և ջրային ոգիների մասին: Ավելի ուշ սովորում է գրել- կարդալ: Նա գրի է առնում իր լսած կախարդական պատմություններն ու իրենց հին տան լեգենդները. Հիշում է, թե ինչպես տատն ամբողջ գիշեր մատնոցի մեջ կաթ էր լցնում տան ոգու համար: Հիվանդ թոռնիկին համոզում էր՝ չվախենալ ձայներից, քանի որ իրենց տան ոգին ամենաբարին է, և կպահպանի իրեն:

Մանկության տարիներին լսած կախարդական հեքիաթները տվեցին իրենց անմահական պտուղները: Իր արտասովոր ու հանճարեղ գործերի համար՝ 1909

թվականին գրողն արժանացավ Նոբելյան մրցանակի: Նա թոշակ էր ստանում Օսկար II թագավորից և դրամական օգնություն՝ Շվեդական ակադեմիայից:

Հայ ժողովրդական բանահյուսության (ինչպես մյուս ժանրերի, այնպես և հեքիաթների) հավաքման ու հրատարակման գործում մեծ ծառայություն է մատուցել Գ. Սրվանձտյանցը:

Պատահական չէ, որ մանկագիր Սուրեն Մուրադյանը գրում է, *«Մանկական իսկական կատարյալ ստեղծագործությունն այն պատուհանն է, որից ճառագայթած լույսը ջերմացնում է մանուկ ընթերցողին, ձևավորում նրա հոգին: Այդ լույսն է օգնում մանուկ ու պատանի ընթերցողին տեսնելու, ընկալելու աշխարհի երևույթները, առարկաները, ընթերցողի առջև բացում կյանքում շիտակ ու ազնիվ քայլելու կանաչ ճանապարհ»:*

Անփոխարինելի է հեքիաթների դերը նախադպրոցական տարիքի երեխաների լեզվամտածողության, ստեղծագործական երևակայության զարգացման առումով: Մանկական ստեղծագործություններ ընտրելիս անպայման անհրաժեշտ է հաշվի առնել դրանց գրական գեղարվեստական արժեքներն ու առանձնահատկությունները: Միայն այս դեպքում տվյալ ստեղծագործությունը երեխայի համար առանձնահատ դառնալու է ուժեղ ու կայուն ներշնչման աղբյուր: Փոքրիկի համար ամեն ինչ պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, ոչ հասարակ: Երեխաների մեջ ազնվություն և ճշմարտախոսություն, բարոյական որակներ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նրանց ուշադրությանը ներկայացնել և դրական, և բացասական գործող անձեր պատկերող գեղարվեստական ստեղծագործություններ:

Մ. Մուրադյանն իր *«Բանի դրին՝ փախավ, հացի դրին՝ հասավ»* հեքիաթում աշխատասիրության գովքն է անում.

*Տեղն է նրանց, ով չաշխատի,*
*Նա կմնա միշտ անոթի,*
*Միշտ անպատիվ ու սներես,*
*Այս երկու ծույլ մկնիկի պես:*

«Մկնիկ հարսնացուն» հեքիաթի միջոցով Ս. Մուրադյանը դատապարտում է ծուլությունը, աշխատանքից խուսափելու հակումը:

Վ. Վարդանյանի «Համերաշխ կոլեկտիվ» հեքիաթի շնորհիվ երեխաները հասկանում և գիտակցում են, որ կյանքում աշխատանքն է հզոր շարժիչ ուժը: «Չար ուլիկը» հեքիաթը երեխաների մեջ դաստիարակում է ծնողասիրություն:

*Բա չե՞ս խղճում*
*Քո այծ հորը,*
*Մի քիչ գոնե*
*Նստիր կողքին,*
*Տաք աղյուս դիր*
*Փորին, ոտքին….*

Այս տարիքում երեխաներն առավել հուզական են և ապրում են հեքիաթների հերոսների կյանքով: Մանկապարտեզի ո՞ր դաստիարակը չի տեսել երեխաների աչքից հոսող արցունքները, երբ ուզում էին մորթել Ախպեր Գառնիկին:

Չորսամյա Աշոտիկն աչքերն ամուր փակել էր և ամուր բռնել մոր թևից, երբ նա հեքիաթ էր պատմում: Երբ նրան հարցրին.

*-Աշոտիկ, ինչո՞ւ ես աչքերդ փակել:*
*-Որ ձիուց վայր չընկնեմ,- պատասխանեց փոքրիկը:* Նա ձուլվել էր հեքիաթի հերոսին, և իրեն թվում էր՝ ինքն է ձիով սլանում:
Անառարկելի է, որ հեքիաթը երեխաների ամենասիրած ժանրն է: *«Հեքիաթը սուտ, բայց խրատող, ջահելներին դաս լինի թող»,*- այսպես էր գրում մեծն Պուշկինը:

Ուսումնասիրություններից պարզել ենք՝ շատ դաստիարակներ դժգոհում են, որ երեխաներն այնքան էլ չեն սիրում հեքիաթներ լսել: Մերօրյա՝ երեխաներին ավելի շատ հետաքրքրում է համակարգիչը, տեխնիկան: Այսօրվա սերունդն էապես տարբերվում է նախորդներից: Հետևաբար՝ ինչ-որ բան պետք է փոխել ուսուցման մատուցման մեջ:

Արդի՝ մանկավարժության գերխնդիրներից է ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումը: Իսկ դրանց կիրառումը հարկավոր է սկսել ամենավաղ տարիքից: Այս խնդրի լուծման երկարատև գործընթացին ձեռնամուխ է եղել համաշխարհային մանկավարժությունը:

Ռեջիո-Էմիլիայի (Իտալիա) մանկական նախադպրոցական հիմնարկներում է ծնունդ առել ***Պատմելու խաղը***.

Երեխաները հերթով կանգնում են մի բարձրության վրա (այն ծառայում է որպես ամբիոն) և հատակին նստած ընկերներին պատմում իրենց հորինած պատմությունները: Ուսուցիչը գրի է առնում դրանք, իսկ երեխան հետևում է, որ նա ոչինչ բաց չթողնի ու չփոխի: Հետո երեխան իր պատմածը պատկերում է մեծ նկարով:

Հետաքրքիր մեթոդներից է նաև հեքիաթների ***«աղավաղումը»***,

- Լինում է չի լինում մի աղջիկ: Նրա անունը Դեղին Գլխարկ
- Ո՛չ թե Դեղին, այլ Կարմիր:
- Այո', այո', Կարմիր, նրան հայրիկը կանչեց ու..
- Դե չէ , հայրիկը չէ, մայրիկը:
- Ճիշտ է, նրան մայրիկը կանչեց ու ասաց.
- Լուիզա մորաքրոջ մոտ գնա և նրան տար.
- Տատիկի մոտ ուղարկեց, ոչ թե մորաքրոջ,

Եվ այսպես շարունակ: Շուռ տված հեքիաթներ:

Հեքիաթների «***աղավաղման***» մի տարբերակ էլ հեքիաթի թեման «շուռ տալն է»:

Օրինակ, Կարմիր Գլխարկը չար է, իսկ գայլը բարի...

Մատնաչափիկը եղբայրների հետ պայմանավորվել էր տնից փախչել, խեղճ ծնողներին թողնել, սակայն նրանք հեռատես էին. նրա գրպանը ծակում են, մեջը բրինձ լցնում: Այն քիչ-քիչ թափվելով «հուշում է» փախուստի ամբողջ ճանապարհը…

Մոխրոտիկը՝ անպետք աղջիկը, մեղմ ու բարի խորթ մորը կատաղեցնում է և հեզ ու հլու խորթ քույրերի փեսացուին խլում...

Զյունանուշիկը թավ անտառում ոչ թե յոթ թզուկների, այլ յոթ հսկաների հանդիպում և նրանց ավազակային հարձակումների մասնակիցը դառնում...

«Հեքիաթը շուռ տալու» մեթոդը նոր մտահաղացումների է հանգեցնում: Այն հարմար է տվյալ նյութը ծաղրապատճենելու և ունկնդրին զվարճություն պատճառելու իմաստով: Միևնույն ժամանակ թեման ցանկացած ուղղությամբ ինքնուրույնաբար զարգացնելու և ստեղծագործելու հնարավորություն է ընձեռում:

Առավել հետաքրքիր մեթոդ է «***Հեքիաթների շիլապիլավը»:***

- Անտառում Կարմիր գլխարկը հանդիպում է Մատնաչափիկին ու նրա եղբայրներին...

«Հեքիաթների շիլափլավի» առաջին նշանները կարելի է տեսնել որոշ մանկական նկարներում, որոնցում գերբնականորեն հաշտ են ապրում տարբեր հեքիաթների հերոսները:

Այս մեթոդն օգտագործել են շատ մայրեր, երբ հեքիաթներից «չկշտացող» իրենց փոքրիկները նորանոր պատմություններ են պահանջել: Նրանք ինքնաբերաբար հնարաստեղծել ու երեխաներին և մատուցել սեփական հորինվածքների տարբերակներ: Այս մեթոդները նպաստում են երեխայի խոսքի, մտածողության և երևակայության զարգացմանը:

Իր «Մտածողությունը և խոսքը» աշխատության մեջ Լ. Վիգոտսկին գրում է.

«Մտածական գործունեությունը՝ երեխայի և նրա ծնողների միջև բառերով արտահայտվող կամ շարժողական երևակայությունից է սկսվում: Ինքնուրույն մտածողությունն այն ժամանակ է սկիզբ առնում, երբ երեխան զրույցներն առաջին անգամ կարողանում է «կլանել» և իր ներսում «մարսել»:

Մանկապարտեզներում հաճախ է օգտագործվում կիսատ թողած պատմության կամ հեքիաթի շարունակում մեթոդը, որը խթանում է երեխաների ստեղծագործական երևակայությունը:

Օրինակ, երեխաներին անչափ դուր եկավ մանկապարտեզներից մեկում ներկայացված ամերիկյան «**Ասպետն ու վիշապը**» հեքիաթը.

*… Կար – չկար մի ասպետ կար, որն ապրում էր քարանձավում: Նա երբեք ոչ մի վիշապի հետ չէր կռվել:*

*… Կար չկար մի վիշապ կար, որն ապրում էր քարանձավում: Նա երբեք ասպետի հետ չէր կռվել: Մի օր ասպետը դղյակի գրադարանում գտավ մի գիրք, որը վերաբերում էր վիշապների հետ կռվելու արվեստին: Այնտեղ կար մի վերնագիր, որը «հուշում էր»,թե ինչպես է հնարավոր կռվել վիշապների հետ:*

*Վիշապը փորփրեց, քարանձավում գտավ մի գրքույկ, որ գրված էր, թե ինչպես պետք է կռվել ասպետի դեմ:*

*Ասպետը գտավ մի գիրք՝ «Զրահի պատրաստում » վերնագրով:*

*Վիշապը գտավ մի գիրք՝«Պոչը ճիշտ շարժելու արվեստը»:*

*Վիշապը փորձում է պոչը ճիշտ շարժել:*

*Այդ ժամանակ դղյակում ասպետը զբաղվում էր զենք ու զրահ պատրաստելով:*

*Ասպետը և վիշապը միմյանց նամակ գրեցին.*

*- «Պարոն ասպետին՝ պատվելի վիշապից… ե՛կ հանդիպենք և կռվե՛նք»: - «Պատվելի վիշապին՝ Սըր ասպետից… ես համաձա՛յն եմ, ե՛կ կռվենք» :*

Կիսատ թողնելով հեքիաթը՝ երեխաներին առաջարկվել է շարունակել իրենց տարբերակը:

Դաստիարակը և ավագ խմբի երեխաները միմյանց լրացնելով շարունակում են: Այն ստացավ հետևյալ տեսքը.

*«Զենք ու զրահը հագած՝*
*Ասպետն ելավ ընդառաջ:*
*Գլուխն օրորելով, պոչը շարժելով*
*Վիշապն է գալիս՝հողը փորելով:*
*Ասպետն ասես մի մժեղ,*
*Վիշապն էլ՝մի հսկա լեռ:*
*Սուրը օդում ճոճում է*

*Մեր քաջարի ասպետը,*

*Պոչն անընդհատ շարժում է*

*Մեր վիթխարի վիշապը:*

*Վերջը հուսահատվեցին*

*Ու մի լավ ծիծաղեցին:*

*Ու ասացին մեկ-երկու.*

*- էլ չենք կռվի ես ու դու:*

Ներկայացնենք ևս մի տարբերակ.

Մեկ այլ խմբում դաստիարակը և երեխաները ասպետի և վիշապի վեճը լուծում են հնարամտությամբ.

Երբ ասպետը և վիշապը հանդիպեցին, ոչ մեկը մտադիր չէր կռվելու:

*Վիշապն առաջարկեց մի հանելուկ, որը լուծեց ասպետը: Նրանք դարձան լավ բարեկամներ:*

Մեկ ուրիշ խմբում դաստիարակը և երեխաները լավատեսորեն ավարտեցին հեքիաթը.

*…Երբ սարի գլխին ասպետն ու վիշապը դուրս եկան կռվի, հանկարծ ամպրոպ ժայթքեց, կայծակը հարվածեց վիշապի պոչին…*

*…Երբ ամեն ինչ խաղաղվեց, դուրս եկավ արևը, յոթնագույն ծիածանը:*

*Ասպետի դիմաց կանգնել էր մի չքնաղ արքայադուստր, որն ասպետի հարսնացուն էր:*

*…Եվ ամբողջ բնությունը, արևը, ծիածանը, ծաղիկներն ու թռչունները մասնակից եղան նրանց հարսանիքին:*

Իսկ ինչպե՞ս է ավարտվում հեքիաթը բնագրում.

*-Վիշապն ու ասպետը չեն ցանկանում կռվել: Նրանք կարող են դառնալ լավ ընկերներ: Նրանք ոշում են մի խորտկարան բացել: Վիշապն իր բերանից կրակ ժայթքելով խորոված էր անում: Ընկերները շատ համերաշխ աշխատում են:*

Մանկավարժի առաքելությունն է՝ հասնել այն բանին, որ երեխան կարողանա հասկանալ և գնահատել հեքիաթի էությունը, փորձի տեսնել իրական կյանքում հեքաթների հերոսներին, տարբերել բարին ու չարը, դառնալ բարու կրողը և միշտհավ ատալ նրա հաղթանակին:

*«Ոչ թե խրատել, ոչ թե սովորեցնել, այլ խաղալ ու ստեղծագործաբար աշխատել, երևակայել, հորինել հեքիաթներ, բանաստեղծություններ, հանելուկներ ու պատմություններ ...*

*Ստեղծագործության հետ շփումը երեխային արդարև կարևոր, մարդուն անհրաժեշտ շատ ու շատ բան է տալիս, անգամ, եթե նա չի պատրաստվում ապագայում գրող, երգահան կամ նկարիչ դառնալ»*

**Անատոլի Ալեքսին:**

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ բազմամյա փորձի արդյունքում համոզվել եմ, որ հեքիաթների ուսուցումը իրոք ծառայում է իր նպատակին, առաջին հերթին այն թեմատիկ թեթևությամբ հաճելի է ընթերցվում երեխաների կողմից, նյութը ավելի մատչելի է նրան, դաստիարակությունը ընթանում է ենթագիտակցաբար:

Այսպիսով, հեքիաթների ուսումնասիրությունը ճշտում, կոնկրետացնում է երեխաների պատկերացումները մարդկային բարոյական հատկանիշների վերաբերյալ և մեծապես նպաստում նրանց մեջ այդ հատկանիշների արմատավորմանը:

Հեքիաթի հիմնական գաղափարներն ավելի խորությամբ ընկալելու համար հնարավոր է վերլուծել ասացվածքը և պարզել, թե ով ինչպես է հասկանում այն, ինչ բարոյական գաղափար է ամփոփված այնտեղ, և նոր միայն ընթերցել հեքիաթը: Նման դեպքում երեխաներն անմիջապես կռահում են բարոյական այն շեշտադրումը, որն ընկած է հեքիաթի հիմքում:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, 1959թ.

2. Նախադպրոցական մանկավարժություն, 1966թ.

3.Ջանի Ռոդարի (Ստեղծագործական երևակայության քերականություն) Երևան 19